



Պրտակազիր կուսիցըն պար 'ի թաւոստեան Գողթան պուրակս  
Մինչ սրբափայլ բորբոս վարդից 'ի ցօղս այգուն դեռ քաղէին ,  
Առաքինւոյն կազմել պըսակ անմահութեան նըշանակերտ ,  
կոյին զբօսեալ 'ի խաղս այգեաց յականակիտ աղբերց հոսանս .

Հանճարեղ լուսելինաց Զուարթունն Հայոց փառապարգև  
Յամբարձաձիգ անդր 'ի ծայրից Արարատեան վեհ դազաթանց'  
կորովաբիր Հանդրին 'ի ծոց սիգօք աշայըն խաղացեալ ,  
ի խինգ 'ի սէր ողորեալ առ Մայրն Հայոց էջ սրխրագին :

Փութացո՛ւ, ասէ , զքոյսդ 'ի պըսակիդ ժիր կատարումն ,  
Տօղաթուրմ՝ պէս պէս վառիք արկէք նարօտս եղեմարուղիս ,  
կատարեցէք կըշիռ 'ի չափ մեծի գըլխոյն զուգապատիւ  
Վըսեմափայլ երկնաթըռիչ քան զՍիսուանեան խըրոխտ բարձունս :

Տեսի կոթող իմն ամբարտակ 'ի վեր քան զմիտս իմաստնաշէն  
Յակընթափայլ Հանդրին ալեաց կանգնել 'ի վեր հրաշափառ ,  
Յաւերթութեան կընիք 'ի դէմս , քաղցր յուսոյ խայծ խընդառիթ .  
Իկրկրեցիկ , ո՛վ Մայրդ Հայոց , տես քեզ զարթեալ նոր կիլիկիա :

Յարեալ աշխարհն հին Հայաստան 'ի ծիրանիս պարթեականս ,  
Յայթաջուր գետովքն իւրովք շուրջ պար առեալ քառայառաջ ,  
Ըզմնացորդ նըշխարս Հայոց ընդ մեծութեանն արկեալ քօղով  
Աւագ աչօք դիտել զՍիսուան ալիշանեան արփիահրատ :

Եղբրամայրըն մըշտամուռնչ զԱխուրեանին հատեալ լալօնս ,  
Ըզժափաձայն դըզչիւնս խառնէ 'ի հետս ալեացըն Սարոսի .  
Ընդ խոխոմս , ընդ դալարի քերեալ զեղբրք ծաղկահամբոյր  
Ըզքոյդ սիրով հընչել զանուն 'ի դաշնաւոր երգս յարածիգս :

Ընդ պարագայս յողունց ամաց յիշատակաց արք անուանիք  
Սեաւ դեղովդ 'ի նոր կենցաղ վերածընեալք անմահ կենօք ,  
Բերկրեցցին յակճիռս յայթիռս յիմաստից քարոս ոսկիաձոյլս ,  
Ի՛նչ 'ի տաճարի անդ համբաւոյն Քեզ դիցեն ոստ դալարուղէչ . . .

Տուն Սեբաստեան , քեզ երանի , որ այսպիսի գանձք օգտաշահ  
Ի քոյդ ելեալ շառաւիղէ փայլեն յերկրի ընդ վեհազունս . . .  
Եւ օթեալանս անմահացի 'նդ ամաց շըրջանս չրաղբօս փափմըք  
Զոր մշտափթիթ սարգենեաց մորճք շուրջ բորբոնն ցանդ անթառամ :

Ի զն՛ր այսուհետև անբըթելին սուր ժամանակ ,  
 Սպառնալիս կապէ ժանեօքն երկաթէիւք ծախել ըզբնաւս ,  
 Ընդ- Կիլիկիայս հարեալ ցընդին 'ի փշուրս կեռիքն արիւնըուշտ .  
 Արձան մեծ անդըծելի ժամանակին անարգանայս . . .

Ոչ շանթածիք սուսերք կորեանց ժրմակասուն Տարրասկան՝  
 Ոչ Մեծադործըն Լեւոնի 'ի դաշտս որստք փայլատականց՝  
 Կատուցին զայս մեծայաղթ ամրակառոյց հըմտից ոստան ,  
 Ընդ խորանաւ օտար երկնից 'ի Կիլիկեան ափանց հեռի :

Այլ այն ոգի վսեմաբարձ հուպ յաստեղունս վերասլացիկ  
 Սովորեալ ցանգ մեծամեծս երկնել , յամայս խորհըրդաւորս .  
 Յորոց զանխուլ է շուինդ մարտից և սասանմանց ահ և երկիւղ ,  
 Խորամուխ 'ի քնին մտեալ հողաթաթաւ հարց մատենից : —

Ուրախ լերուք վանորայք 'ի լըռանխտ յեմակս հովտաց  
 Բազմահառաչըն Սարոսի լըքեաք թափուր յողոց մըրմունչս .  
 Գեր զՍկեւեռայն յալեացն 'ի վեր կանգնի կըղզեակըս բորձրադէտ  
 Եւ 'ի փառըս պարծանացն ոչինչ ընդհատ յառաջադէմ : . . .

Մի կրեստք ունայնամիտք , մի ընչպզազց յաղթողք երկրի  
 Նախանձուկս արկցեն 'ի մեզ բազմամըթեր սնոտի գանձիւք .  
 Ոչ և յուրանք լիբէականք , ոչ առ 'ի կախ ճօճեալ ծաղիլոցք ,  
 Ոչ Կապիտոլ աշխարհասաստ թըւին մնայուն ինչ յիշատակ : . . .

Այլ զինչ արձան վայելչակերտ իցէ կանգնել 'ի Քո՛ անուն .  
 Կտմ յոր անուն յորջորջել՝ որ այլոց քաջ քաջ պատշաճես . . .  
 Սիրելի ես որդւոցդ և պատուական յերամս նոցին ,  
 Բարձրապատիւ անուամբ ծընեալ և վաստակօք ստանձնեալ ըզնոյն :

Եռանդնաչարժ կըրից հողւոյդ առատասփիւռ իմաստութեանդ ,  
 Լըցեալ քոյով յիսուսաբուղիս յերմին ըզձիւքրդ աստուածեան ,  
 Լուսաշաւիղ ճանապարհիդ տենչամք կըրսերքըս զալ ըզհետ ,  
 Հիաքանչ խընդալ յաւէտ յանկողնպուտ գանձս երկնածիր :

Չոր ընդ ժամս և ժամանակս կըրեմք 'ի ծոցս սիրապատար  
 Չանկեղծ մաղթանս 'ի սերտ սըրտէ քաղցր արևու երկար կենաց ,  
 Խընկաբոյր թեւօք ծաղկունս նորս առ հընով յեռումք 'ի լըուսն .  
 Մեծ իմն յաստիս քան դայդ՝ Սէր չունի պաշտել ճոխ մըրցանակ :

Հ. Գ. ՆԱՆՍԵՏԵԱՆ

